Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-18/4-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

1 մարտի 2018
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արթուր Բեգլարյանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ
Հայտերի անհամապատասխանության շտկման և գնահատման մասին

ՀԾԿՀ-18/4-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ շտկվել է «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի «Հավելված 2.1»-ի անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը քննարկեց և որոշ իրականացնել հայտերի գնահատումը:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«ԹԱՍԿ» ՍՊԸ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասերով,
  2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 4-րդ չափաբաժնի մասով:
- **«Իրինա Մելքոնյան» Ա/Ձ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 3-րդ չափաբաժնի մասով:
- **«Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 4-րդ չափաբաժնի մասով,
  2-րդ և 3-րդ չափաբաժինների մասերով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:
- **«Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն՝**
  1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:
- **«Յասոն» ՍՊԸ-ն՝**
  3-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:
- **«Դասո Պրինտ» ՍՊԸ-ն՝**
  1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացությունը տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արթուր Բեգլարյան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Անուշ Սմբատյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան